ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<11>> դեկտեմբերի 2024թ. N ՄՈ/590 -Ա

ք. Արմավիր

«ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 226-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի նոյեմբերի 21-ի N01/11.1/08407-2024 գրությունը և «Բամբակաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի 2024 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 62 գրությամբ ներկայացված գրավոր բացատրությունը, «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջների» N2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը, հաստատության պահպանման և սանիտարական վիճակին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական և հիգիենիկ պահանջները չպահպանելու, դրանց պահանջներն ապահովելու, ինչպես նաև մաքրման աշխատանքների նկատմամբ պատշաճ հսկողություն չիրականացնելու համար.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Բամբակաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Տիգրան Պողոսյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-12-11 12:46:40 GMT
Հավաստված է ԷԿԵՆ-ով

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**